Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Արարատի մարզի Փոքր Վեդու Մարգար Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց

Թեմա՝ Չափորոշիչները գործողության մեջ. Ձեռքբերումներ և դժվարություններ

Վերապատրաստող՝ Մարինե Զարոյան

Ուսուցիչ՝ Անի Մարգարյան

Արարատ 2024

Բովանդակություն

Ներածություն----------1

ԳԼՈՒԽ 1: Չափորոշիչները գործողության մեջ----------2

ԳԼՈՒԽ 2: Գիտելիքների համակարգ----------7

Եզրակացություն----------14

Օգտագործված գրականության ցանկ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների անհրաժեշտ վերանայումների կարիքի գնահատումը:

Հետազոտության շրջանակն ընդգրկել է կրթակարգի ձևավորման, բովանդակային և յուրացման խնդիրները:

Հանրակրթության պետական կրթակարգը, հանրակրթության պետական չափորոշիչը, առարկայական չափորոշիչները և ծրագրերը դիտարկվում են որպես հանրակրթության որակի ձևավորման և ապահովման կրթական համալիր քաղաքականություն:

Ի՞նչ է չափորոշիչը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ և ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ նկարագրություն,որը պետք է սովորեցնել աշակերտին դպրոցում: Դպրոցը պարտավոր է ապահովել չափորոշչով պահանջվող գիտելիքների և կարողությունների ուսուցմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է հանրակրթական պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների անհրաժեշտ վերանայումների կարիքի գնահատումը:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

ուսումնասիրել ի՞նչ է փոխում հանրակրթական նոր չափորոշիչը

բացահայտել ի՞նչ բնութագրիչներով է որոշվում գիտելիքների համակարգը:

Թեմայի արդիականացումը կայանում է նրանում, որ ներկայիս հանրակրթական պետական կրթակարգը հնարավորություն է ընձեռում չբացառելով մյուս բնութագրիչների դերը ընդունել գիտելիքի կիրառելիությունը, կառուցելիությունը և հասանելիությունը:

ԳԼՈՒԽ 1

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ. *ՀԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Համաշխարհային արդի զարգացումները իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Աճում է կրթության դերը՝ միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակների:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորվում է ժողովրդավարության և ազատական տնտեսության վրա հենվող քաղաքացիական հասարակություն: Կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհագրական, ժողովրդագրական, մշակութային և սոցիալական գործոններով: Հետևաբար, կրթության ոլորտում էապես կարևորվում է այն հարցը, թե ոչ միայն հարկ է խթանել յուրաքանչյուր անհատի ստեղծագործական ներուժի զարգացումը, այլև նրանում հարգալից վերաբերմունք դաստիարակել այլոց ազգային արժանիքների հանդեպ, սովորեցնել ճանաչել և գնահատել աշխարհն իր բազմազանության մեջ, երիտասարդ սերնդին ներարկել համակեցության և ստեղծագործ համագործակցության ձգտումներ:

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության բովանդակության և ուսումնական գործընթացի ժամանակակից կրթական պահանջներից են գործող չափորոշիչները, առարկայական ծրագրերն ու դասագրքերը, և գնահատման համակարգը:

Հանրակրթության պետական չափորոշիչը նորմատիվ փաստաթուղթ է, որը սահմանում է՝

- Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը,
- Կրթական ծրագրի առավելագույն ծավալը,
- Ըստ կրթական մակարդակների՝ շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները,
- Սովորողների գնահատման համակարգը,

.

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումներից և սահմանում է՝

- շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների
- ուսումնական բնագավառները,դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները
- հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը
- ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները
- սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

ՈՒսուցչի համար դասերի պլանավորման հիմնական ուղենիշը պետք է լինի չափորոշիչը: Ճիշտ և հստակ պլանավորումը լայն հնարավորություն է ստեղծում ուսուցումն ավելի արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար:

Պետական կրթական չափորոշիչը նվազագույն կրթական մակարդակի և սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն որոշող պահանջների ամբողջությունն է:

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար: Պարտադիր պահանջ է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Կրթության բովանդակությունն ըստ հանրակրթական պետական չափորոշչի կազմում են՝ հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված սովորողի կողմից յուրացման համար նախատասված գիտական գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական և գեղագիտական համամարդկային արժեքները: Յուրաքանչյուր ուսումնական բնագավառ ներկայացվում է կրթության բովանդակային բաղադրիչի միջոցով.

ա. Գիտելիքների համակարգ

բ. Կարողություններ և հմտություններ

գ. Ճանաչողական , տրամաբանական

դ. Հաղորդակցական

ե. Համագործակցային

զ.Ստեղծագործական

է. Ինքնուրույն գործունեության՝

ը. Արժեքային համակարգ

ԳԼՈՒԽ 2

ա Գիտելիքների համակարգ

Արմատական հարցը, որ վերաբերում է գիտելիքին. հետևյալն է բնութագրիչներով է որոշվում այն գիտելիքի համակարգը,որ ներառվել է կրթության բովանդակության մեջ: ՀՀ հանրակրթական պետական կրթակարգը հնարավորություն է ընձեռում, չբացառելով մյուս բնութագրիչների դերը ընդունել որպես առաջատար բնութագրիչներ կիրառելիությունը, կառուցելիությունը և հասանելիությունը:

Կիրառելիության պահանջը դիտվում է որպես անհրաժեշտ նախ և առաջ ամենօրյա կյանքում:

Կառուցելիության բնութագրիչը վերաբերում է գիտելիքի ներկայացման ձևին.հարցն այն է, որ գիտելիքը մատուցվում է որպես պատրաստի արդյունք, թե որպես հայտնաբերության ընթացք: Շեշտադրումը պետք է փոխադրվի հայտնաբերության վրա: Հասանելիությունը վերաբերում է գիտելիքների հաջորդական պլանավորմանը՝ սովորողների զարգացմանը համապատասխան:

բ Կարողություններ և հմտություններ

Պատմական ակնարկ

<<Կարողություն>> (կոմպետենցիա) եզրույթը մանկավարժական գրականության մեջ սկսվել է շրջանառվել XX դարի 70-80 ական թվականներից,երբ արևմտյան երկրներում և ԱՄՆ -ում սկսեցին լրջորեն քննադատել կրթության նպատակներն ու բովանդակության ձևավորման մոտեցումները:Արագ փոխվող կյանքը , գիտությունը և տեխնիկայի զարգացումը մասնագետներից պահանջում էին աշխատանքային շուկային արագ հարմարվելու ճկունություն:

Ամերիկյան հետազոտողները պարզեցին, որ շատ հաճախ մարդկանց ինտելեկտի բարձր աստիճանը մասնագիտության գործունեության ընթացքում մնում է չիրականացված: Այդ ժամանակներում լայն տարածված IQ թեստերը,որոնցով չափում էին մարդու իմացական մակարդակը չէին երաշխավորում նրա մասնագիտական հաջող գործունեությունը: Թեստը տալիս էր բարձր արդյունք, մինչդեռ իրական կյանքում մարդը ցածր արդյունավետությամբ էր աշխատում:

Այս բաղադրիչով տրված կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռնում գործնականում կիրառել ստացած գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը,

զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները:

Չափորոշիչներում առանձնակի կարևորվում են ճանաչողական հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակածում (ինդուկցիա), արտածում(դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում: Հաղորդակցական կարողություններ և հմտություններ ենթաբաժնի նպատակն է, որ յուրաքանչյուր սովորող կարողանա՝

1. լսել,ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել
2. բանավիճել,բանավոր և գրավոր խոսք կառուցել
3. սովորել և սովորեցնել
4. օգտվել ժամանակակից հաղորդակցման միջոցներից
5. ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները
6. դրական հարաբերություններ ստեղծել,դրսևորել առողջ մրցակցություն

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձաքանքելու ձևերն են:

Ընդհանուր առմամբ կարողունսկությունները չի կարելի համարել վերջնականապես ձևավորված որևէ արդյունք ։ Այն շարունակական գործընթաց է ,որի ժամանակ նշված որակները անընդհատ կարող են կատարելագործվել: Դրանց ձևավորումը սկսում է դպրոցից և շարունակվում ամբողջ կյանքի ընթացքում:

գ. Ճանաչողական տրամառանական կարողություններ

Այս ենթաբաժնի նպատակն է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ: Գիտելիքներ ձեռք բերել զգայական ընկալման և մտապատկերման միջոցով, վերլուծել,քննարկման, մեկնաբանման, տարանջատման, համեմատության, խմբավորման միջոցով:Դրսևորի հարգանք,ազնվություն,պատասխանատվություն ինչպես սեփական անձի,արնպես էլ այլոց հանդեպ:Սոցիալական հարաբերությունում գործի կառուցողականություն և համերաշխություն,դրսևորի ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ:

դ. Հաղորդակցական կարողություններ

Այս ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանալ լսել, ընկալել և համապատասխան վերաբերմունք դրսևորել, բանավիճել, տեղին օգտագործել սովորած տերմինները, օգտվել ժամանակակից տեխնիկական միջոցներից:

Ե . Համագործակցային կարողություններ

Այս բաղադրիչի նպատակն է՝ աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել, սովորել սովորեցնել,դրսևորել առողջ մրցակցություն, սեփական շահը գիտակցելով՝ճանաչել ուրիշների շահը, լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ - իրավունքները,բախումային իրավիճակներում դրսևորել հավասարակշռված պահվածք:

զ .Ստեղծագործական կարողություններ

Նպատակ ունի զարգացնել սովորողի ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը,որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,ընկալել և ընդունել հոգևոր նոր արժեքներ, անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները:

է. Ինքնուրույն գործունեություն

Նպատակ է հետապնդում որ յուրաքանչյուր սովորող կարողանա խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք, ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել աշխատանքի և հանգստի ռեժիմ,զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ, կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերի հետևանքները

ը. Արժեքային համակարգ

Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝ գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, գիտակցի որ գիտությունը , արդիական տեխնոլոգիաները,կրթությունը , մեծագույն արժեքներն են ժամանակակից աշխարհում, կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, արդար, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ,բարեկիրթ, կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, հարգի մարդու իրավունքները, գիտակցի իր տեղն ու դերը

ընտանիքում և հասարակության մեջ, լինի նանախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք, անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները, մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմանակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգության կանոններին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ձեռքբերումներ և դժվարություններ.

Արմատական հարցը, որը վերաբերում է առհասարակ գիտելիքի նկատմամբ մոտեցմանը, հետևյալն է. ինչ բնութագրիչներով է որոշվում այն գիտելիքի համակարգը,որը ներառում է կրթության մեջ: Ասենք ,որ դա մանկավարժության մեջ շարունակաբար բարձրացող հարց է, իսկ ժամանակակից կրթական հայեցակարգերում արտահայտվում են տարբեր տեսակետներ: ՀՀ հանրակրթական պետական կրթակարգը հնարավորություն է ընձեռում, չբացառելով մյուս բնութագրիչների և սկզբունքների դերը, որպես առաջատար բնութագրիչներ ընդունել գիտելիքի կիրառելիությունը, կառուցելիությունը և հասանելիությունը:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԵՄ ՀԱՄԱՐՈՒՄ ԳԻՏԵԼԻՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ ՆԱԽ ԵՎ ԱՌԱՋ ԱՄԵՆՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ:

Գրականության ցանկ

1.Ա.Գասպարյան, Ա.Բալայան,Գ.Պողոսյան,Դ.Գրիգորյան, Ն.Գևորգյան, Ս.Պողոսյան, Վ.Պուրուկուրու, Համագործակցային ուսուցում ,ձեռնարկ, Երևան,Անտարես 2006

2. Հայաստանի Հանրապետության հանրակրթական պետական չափորոշիչ:

3. ՈՒսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր (մատյանից քաղվացքներ):

4. hhps://escs.am.

5. kznakhimnadram.blogspot.com